2126.11/11436

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«17» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0053-21

Ձեռնարկողը՝ ***Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲ ընկերություն***
ք. Երևան, Նուբարաշենի վարչական տարածք, Նուբարաշեն ավան 11-րդ փող թիվ 75

Գործունեությունը՝ ***Նուբարաշեն վարչական տարածք, Նուբարաշեն ավան 11-րդ փողոց թիվ. 75 հասցեում հրկիզարանի տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
քաղաք Երևան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0053-21

«17» 03 2021թ.

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական տարածք, Նուբարաշեն ավան 11-րդ փողոց թիվ. 75 հասցեում հրկիզարանի տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	Վլադ Հակոբյանի անվան «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն՝ կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	/Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նուբարաշեն վարչական տարածք, Նուբարաշեն ավան 11-րդ փողոց թիվ. 75

Ներածական մաս. Վլադ Հակոբյանի անվան «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված թռչունների մարմինների և մորթից առաջացող մնացորդների այրման հրկիզարանի տեղադրումը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Նուբարաշեն վարչական տարածքի Նուբարաշեն ավան 11-րդ փողոց թիվ. 75 հասցեում՝ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱ» ԲԲ ընկերության սեփականություն հանդիսացող 62.05հա արտադրական տարածքում, վարձակալական հիմունքներով:

Համաձայն «ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱ» ԲԲ ընկերության և Վլադ Հակոբյանի անվան «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի «ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱ» ԲԲ ընկերությունը ժամանակավոր տիրապետման և օգտագործման է հանձնել իր արտադրական հզորությունները Վլադ Հակոբյանի անվան «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ին:

Հողատեսքի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնականը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Գործունեության նպատակն է վերազինել ընկերության գործունեությունը՝ կենդանական ծագման թափոնների այրման հրկիզարանի տեղադրմամբ, ելնելով բիզնես նկատառումներից և սեփական կարիքների բավարարման անհրաժեշտությունից:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Նախագծվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի ա) ենթակետի հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Վլադ Հակոբյանի ԱՆՎԱՆ «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի կողմից վարձակալած արտադրական տարածքում՝ արտադրական գործունեությունը նախատեսված է հավերի բուծման, աճեցման աշխատանքներ կատարելու և մսամթերք արտադրելու համար: Կազմակերպությունը բնութագրվում է որպես առաջատար ժամանակակից տեխնոլոգիա ունեցող և ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումների օգնությամբ որակյալ արտադրանք թողարկող տնտեսվարող սուբյեկտ: Ներկայումս ընկերության հզորությունը կազմում է 20000տ մսամթերք տարեկան:

Ընկերության տարածքում տեղակայված են թվով 6 թռչնանոց, յուրքանչյուրը 1820.3քմ, գոմեր՝ 26460քմ, որոնք նույնպես օգտագործվում են որպես թռչնանոց, վարչական շենք և մորթի արտադրամաս:

Համաձայն գնահատման հաշվետվության ընկերության արտադրական տարածքի անմիջական մերձակայքում բնակելի տներ չկան: Արտադրական տարածքի շուրջ բոլորը դատարկ հողեր են: Մոտակա շինությունը գտնվում է 820մ հեռավորության վրա, տվյալ շինությունը իրենից ներկայացնում է անասնագոմ: Մոտակա բնակելի տունը գտնվում է ավելի քան 500մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող երկարամյա մարդածին ազդեցության ենթարկված տարածքում, որով էլ պայմանավորված է բաց հողատարածքների, ջրային ավազանների, բուսատեսակների և կենդանատեսակների բացակայությունը: Նախատեսվող գործունեության հարակից տարածքում չկան պատմամշակութային հուշարձաններ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ թռչունների մարմինների մորթից առաջացող մնացորդների այրման և վնասազերծման նպատակով, ընկերության տարածքում տեղադրվելու է ԵՄ ստանդարտին և պահանջներին համապատասխան 1785կգ քաշով, 1.474 մ^3 տարողությամբ KPH-500 մակնիշի հրկիզարան: Կիզարանը նախատեսվում է տեղադրել 9.4x5մ չափսերով փակ շինության մեջ, բետոնապատ հարթակի վրա: Փակ շինության օդափոխությունն իրականացվելու է բնական եղանակով: Վառարանի 1 լիցքավորման միջին քանակը կազմելու է 500կգ, տարեկան առավելագույն արտադրողականությունը՝ 230տ/տարի, այրման հզորությունը 50կգ/ժամ: Այրման ընթացքում վառարանում առավելագույն ջերմաստիճանը հասնելու է 760°Շ–870°Շ, որը հնարավորություն է տալու թափոնները ենթարկել խորը ջերմային վնասազերծման: Թափոնների ջերմային վնասազերծումը կատարվելու է հրկիզարանի հիմնական և երկրորդային խցերում: Վառարանն աշխատում է բնական գազով, տարեկան իրականացվում է առավելագույնը 460 լիցքավորում, համաձայն հրկիզարանի տեխնիկական տվյալների գազի ծախսը կազմում է 12.07մ^3/ժամ, տարեկան գազի ծախսը կազմում է 55600մ^3:

Թափոնների այրման վառարանը կահավորված է D=0.16մ և H=4.5մ ծխատարով:

Ընկերության տարածքում թափոնները կպահեստավորվեն հատուկ սառնարանային տիպի 3x4մ չափսերով պահեստում, այն թերմոսային տիպի է, կահավորված հատուկ հովացման համակարգով: Թափոները կպահվեն ամառը մինչև 48 ժամ, ձմռանը 72 ժամ, որտեղից կտրվեն կիզարան:

ՀՀ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՍՊԵՏԱԿԱՆ ՄԻՏՈՒԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գործունեության իրականացման ընթացքում հողաշինական աշխատանքներ չեն կատարվելու, բնառեսուրսներ (հողային և ջրային) չեն օգտագործվելու: Հրկիզարանի տեղադրման ընթացքում օգտագործվելու է միայն բետոնային խառնուրդ, որը մատակարարվելու է պատրաստի վիճակում: Աշխատողների խմելու և կենցաղային կարիքները բավարարվելու են ընկերության գոյություն ունեցող խմելու ջրի և սանիտարահիգենիկ ցանցի միջոցով:

Համաձայն գնահատման հաշվետվության, գործունեության իրականացման ընթացքում Կենսաօրգանական թափոնների ջերմային վնասազերծման ընթացքում կառաջանան այրման մնացորդներ (մոխիր): Ըստ արտադրող կազմակերպության տվյալների այրման մնացորդների քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 5 տոկոսը: Հաշվի առնելով հաշվարկային առավելագույն արտադրողականության ցուցանիշը՝ 230 տ/տարի, մնացորդների (թափոնի) առավելագույն քանակը կկազմի 11.5 տ/տարի: Այս թափոնը ՀՀ բնապահպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածում ներկայացված է 3130080101014 ծածկագրի տակ՝ "Կրակային վնասազերծման վառարանների խարամ և մոխիր" տողում, վտանգավորության 4-րդ դաս է:

Մոխիրը վառարանից հեռացվելու է մեխանիկական և չոր եղանակով, ձեռքով՝ խոզանակի օգնությամբ: Այն լցվելու է բազմակի օգտագործման 2 մետաղական արկղերի մեջ՝ ժամանակավոր պահեստավորման նպատակով: Նախատեսվում է շաբաթական մեկ-երկու անգամ մետաղական արկղերի պարունակությունը սանիտարական ծառայության մեքենաներով, պայմանագրային հիմունքներով, տեղափոխել աղբավայր:

Գնահատման հաշվետվությունում դիտարկվել են գործունեության իրականացման զրոյական, այլընտրանքային (քիմիական, ջերմային) տարբերակների վերլուծությունները՝ համապատասխան հիմնավորումներով: Ընկերության կողմից կատարված այլընտրանքների վերլուծության, շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական և բացասական ազդեցությունների գնահատումների հիման վրա, ընտրվելը թափոնների չեզոքացումը՝ ժամանակակից հրկիզարանների միջոցով: Հաշվարկվել է նաև շրջակա միջավայրի վրա (մթնոլորտ) ազդեցության տնտեսական վնասի գնահատումը, որը կազմելու է 202336 դրամ/տարի:

Ըստ հաշվետվության, շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցությունների ավելացում չի լինելու, գործունեության իրականացումը չի ունենալու համալիր ազդեցություններ, քանի որ տարածքում բացակայում են արտանետումներ ունեցող այլ արտադրություններ:

Համաձայն գնահատման հաշվետվության վառարանի շահագործման ընթացքում, թափոնների և գազի այրման արդյունքում առաջանալու են վնասակար նյութերի արտանետումներ, հիմնականում 5 նյութերի տեսքով՝ ածխածնի օքսիդի (CO), ազոտի օքսիդի (երկօքսիդ՝ NO_2), ծծմբի երկօքսիդի (SO_2), պինդ մասնիկների (ՊՄ), սահմանային ածխաջրածիններ՝ (CH): Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ /"Էռա" ("ЭРА") համակարգչային ծրագրով/: Համաձայն հաշվարկների արդյունքների արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ները:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ" ՊՈԱԿ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու թափոնների այրման, տեղափոխման, օդում՝ ածխածնի, ազոտի և ծծմբի երկօքսիդների, պինդ մասնիկների, ածխաջրածինների պարունակության ավելացման, արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ, որոնք շրջակա միջավայրի վրա կունենան ազդեցություններ՝ թույլատրելի նորմերի սահմաններում: Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է օդային ավազանի աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում).

- այրման խցում անհրաժեշտ ջերմաստիճանի և համապատասխան աշխատանքային ռեժիմի ապահովում,
- վառարանի ծխատար խողովակի մերձակայքում՝ 2-5մ շառավղով նմուշառում, մասնագիտացված լաբորատորիայի կամ կազմակերպության կողմից, օդում ածխածնի, ազոտի և ծծմբի երկօքսիդների, պինդ մասնիկների, ածխաջրածինների արտանետումների քանակի ստուգում և լաբորատոր անալիզի կատարում՝ ամիսը 1 անգամ,
- վառարանի մաքրում՝ չոր եղանակով, առանց ջրի և լուծույթների օգտագործման,
- թափոնների պահեստավորում հատուկ և փակ տարածքում՝ պարկերի կամ բեռնարկղերի մեջ, անձրևաջրերի հետ դրանց շփումը բացառելու համար,
- վառելիքի մետաղական պահոցների մաքրում՝ 2 տարվա պարբերականությամբ,
- արտակարգ և վթարային իրավիճակների առաջացման դեպքում՝ գործունեության դադարեցում և այլն:

Բնապահպանական միջոցառումների կատարման համար նախատեսվող ծախսերը կազմելու է տարեկան 800.000 դրամ:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունը կատարվելու է գոյություն ունեցող արտադրական՝ հողային, ջրային ռեսուրսներից և բուսականությունից զուրկ տարածքում: Նախատեսվող գործունեության ազդեցությունը կլինի օդային ավազանի վրա, որը գտնվելու է թույլատրելի նորմերի սահմաններում: Թռչունների մարմինների և մորթից առաջացող մնացորդների բարձր ջերմաստիճանում վնասազերծման արդյունքում առաջանալու է այրման մնացորդներ՝ մոխիր:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով ք. Երևան, Նուբարաշեն վարչական շրջանում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկման (մոնիթորինգ) և հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարումը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, բացառելով մթնոլորտային արտանետումների շեղումները նորմերից:

ՀՀ ԵՐԵՎԱՆ Գ. ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱՅՈՒՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀՕՏ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԿ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS 02543163 ՀՀ ԵՐԵՎԱՆ Գ. ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱՅՈՒՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀՕՏ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԿ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Նախքան վառարանի գործարկումը անհրաժեշտ է սահմանված կարգով մշակել թափոնի անձնագիր, համաձայնեցնել շրջակա միջավայրի նախարարության հետ և թափոնի տեղադրումը իրականացնել՝ ըստ անձնագրի:
- Պահպանել հրկիզարանի այրման ջերմաստիճանը՝ ապահովելով ՇՄԱԳ հաշվետվությամբ ամրագրված թափոնի(մոխիր) բաղադրությունը:
- Պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱԱՍ

Վլադ Հակոբյանի անվան «ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական տարածքի, Նուբարաշեն ավան 11-րդ փողոց թիվ. 75 հասցեում թռչունների մարմինների և մորթից առաջացող մնացորդների այրման հրկիզարանի տեղադրման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան